

1) Պարտաւորութիւն կը շարունակուի Անդր-
կիայի առանձին շահերը Բաղդադի ճանա-
պարհի խնդրում, մասնաւորապէս Բաղդադ-
Բարսաբէ շրջանում:

2) Թողնել Անգլիային առանձին առաւել-
ութիւններ Հայրապետին Արարիայում, Անդր-
կիայի այդ շրջանում ունեցած էական տըն-
տեսական շահերի նկատմամբ:

3) Մտցնել անհրաժեշտ բարեփոխում-
ներ Փոքր-Ասիայում, յատկապէս Հայաս-
տանում, Քիւրդիստանում, Սիրիայում և
Միջագետքում:

4) Թողնել Անգլիային գործողութիւնների
լիակատար ազատութիւն Կովէյսի սուլթա-
նատում:

5) Ընդառնալ վստի արար ցեղերին նրանց
զէպի ինքնավարութիւնն ունեցած ձգտու-
ների մէջ:

6) Կարգադրել յօգուտ Պարսկաստանի
ծագած սահմանային վէճերը:

Այդ փոխադրած պարտաւորութիւնների
ընդհանուր գումարի մէջ իրանց վրա
առանձին ուշադրութիւն են գրաւուել երկու
հանգամանքը Այդ, առաջին, Անգլիայի հա-
մաձայնութիւնն է գուրս զալ Թիւրքիայի
զիլլայատական փաստաբանի դերում բո-
լոր միջազգային խորհրդակցութիւնների
ժամանակ և Թիւրքիայի պաշտպանի դե-
րում նրա մեացած կառուածների ամբող-
ջութեան վրա յարձակողների վերաբեր-
մամբ: Երկրորդ՝ Թիւրքիայի համաձայնու-
թիւնը Անգլիայի զարանի հովանաւորու-
թիւնը հաստատելու ոչ միայն Կովէյսում,
Շատ-Իւլ-Արարում, այլ արարական փերա-
կզող հարաւային մասում: Չը նայած որ
պարտեկաորատ խօսքը չը կայ էլ պայ-
մանագրի բնագրում, բայց Անգլիայի առ-
անձին շահերն ճանաչուել Արարիայում,
նոյնպէս և ինքնավարութիւն հաստատելու
անհրաժեշտութիւնները — այդ վճռական
քայլն է հաստատելու փաստացի պրօտեկ-
տորատը: Հարաւային Արարիային սպասում
է այժմ Եզրիպատի լիճակը, և Անգլիայի
կողմից, ի հարկէ, չի պահանջուել առանձին
ջանք, որպէսզի հասնի իր մերձ-արեւելեան
քաղաքականութեան վախճանական նպատա-
կին — ոչ միայն փակելու ընդմիջու ծովային
ճանապարհին զէպի Հնդկաստան, այլև օդա-
կին անց-կացնելու եռակի կողմէ: (ՏԿ.Մ.Ձ)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԷ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԷՆ

Ներկայ 1913 թ. մայիսի 11-ին Ան-
նայն Հայոց Կաթողիկոսը № 761 կօնդակով
հաստատել է Երևանում ընտրված թեմական
յօրելանական յանձնաժողովը՝ հանգանակելու
հաւար նուիրատուութիւններ յօգուտ դպրոց-
ցական ֆօնդի Այդ յանձնաժողովը, որ գոր-
ծում է Երևանի փոխ-թեմակալ Թորն Ե-
պիսկոպոսի նախագահութեամբ, սպասարկելու
և կաթողիկոսական կօնդակը և իր կողմից ևս
կցել նրան մի կաշ, ուղղված թեմի հայ
ժողովրդին, հետևելով բովանդակութեամբ:

Ազգային Վեհափառ Կաթողիկոսի սոյն սըր-
բատան կօնդակի հիման վրա կոշ ենք ա-
նում ձեզ, Երևանի թեմի հայ ժողովուրդ:
Կոշ ենք անում յաւերժացնելու հայ տա-
ւերի գիւտի 1500-աւեան և հայ սպասարկու-
թեան 400-աւեան յօրելանքը: Ազգային այդ
պիտանայի և թեմ յօրելանքը կատարելով,
պէտք է հայ ժողովուրդը սրտի առանձին
գոհունակութեամբ, Իրանաւու կերպով ան-
մահացնել այդ ածնի նշանակութիւնը մի
վե՛ն գործով՝ ընդհանուր դպրոցական ֆօնդի
հաստատուելով:

Յայտնի է, որ ուղղութի կեանքի մէջ ա-
ռաջնադասութեան, ժողովուրդների բարօ-
րութեան և կուլտուրական շարժման զլխա-
ւոր առանցքը՝ դպրոցն է համարվում: Մի
հիմնարկութիւն, որտեղ մտադրեալ սե-
րունդը զարուծ, մաքրվում է բազմատեսակ
պակասութիւններից, զինվում է գիտու-
թեան առած պաշարով և զատարարակի-
ւով ընդհանուր գործունէութեան համար՝
ամեն տեղ, ամեն ժամանակ հասարակական
կեանքի օգտակար յեղաշրջմանը խթան է
հանդիսացնելու:

Չայ ժողովուրդ, այսօր ան այդ մեծ
հիմնարկութեան, դպրոցի սպանութեան
խնդիրն է զրված քո առաջ քո սիրեցեալ
Հայրապետի կողմից, մի խնդիր, որ սուրբ
է բոլորին համար անխախտ, թէ մեծի ու
փոքրի, թէ հարուստի ու աղքատի համար:
Ձեզ, հայ ժողովրդի գիտակից ներկայա-
ցուցիչներ, յանուն հայ ժողովրդի ընդհա-
նուր առաջադիմութեան, առաջարկում ենք
սրտանց մտնել այդ խնդիրն, օգնութեան
ձեռք կարկտանել մեզ՝ հասկացնելով, բացա-
րելով վերայիցեալ խնդրի մեծ նշանակու-
թիւնը ժողովրդի այն բոլոր խաւերին, որ-
ոնց հաւար դպրոցի նշանակութիւնը զեռ
այնքան պարզ չէ, մտքն ու խաւար է: Օգ-
նեցէ՛ք մեզ ձեր հոգովորէն գործունէու-
թեամբ, որպէսզի ժողովրդի առած նուէր-
ներով հարաւոր լինի ընդհանուր դպրոցա-
կան ֆօնդ կողմէ, որով միայն հարաւոր
կը լինի ապագով մեր դպրոցների գոյու-
թիւնը և ապա նրանց կանգնելով իրանց
բարձրութեան վրա հասարակական կեանքի
լուսաւորութեան կենտրոններ կը դառնան:

Երկրորդական ֆօնդի կազմակերպութեան
համար, համաձայն Վեհափառ Հայրապետի
նախորդ հրահանգների, շրջաբերականներով
մասնակներ և ստորապարտութեան թերթեր
ուղարկված Երևանի թեմի բարձրապատի
փոխանորդներին և արժանապատիւ գործա-

կաններին, որոնց և յանձնաժողովին նախա-
գահի՛ Երևանի փոխ-թեմակալի կողմից ա-
ռաջադրված է տեղական մասնաժողովներ
կազմակերպել և սկսել ժողովարարութեան
գործը, որ, համաձայն կովկասի տէր փո-
խարքայի թոյլատրութեան, վերջնապէս է
սոյն տարվայ հոկտեմբերին Աջակցեցէ՛ք
նրանց բոլորին, օգնեցէ՛ք ինչով հարա-
ւոր է:

Քիւրդական յօրելանական յանձնաժողով
միանգամայն վստահ է հայ ժողովրդի բո-
լոր խաւերի աջակցութեան և բանիւաց
տարրի գիտակից վերաբերմունքի վրա և
յոյս ունի, որ Երևանի թեմի հայ ժողովուր-
դը իր սրտաբուզին և եռանդուն աջակցու-
թիւնը ցոյց կը տայ այն գործում:

Այս զօղումնաներից պարզ է, որ ինչպէս
Շահախում, նոյնպէս և Երևանում (և այլ
թեմերում, ինչպէս գիտնեք) կաթողիկոսա-
կան կօնդակով կայ հաստատված թեմական
յօրելանական յանձնաժողովը, որ, ինչպէս
վայել է ամեն մի օրինաւոր հաստատու-
թեան, գործում է ուղղակի, առանց յետին
մտքերի և գործում է յօգուտ այն նպատա-
կի իրադրման, որի համար հաստատված
է, թոյլ չը տալով իր գործունէութեան մէջ
երկուութիւն, անորոշութիւն և մի ձեռքով
երկու ձեռքով բռնելու կամ մի հարու-
սով երկու թռչուն սպանելու քաղաքակա-
նութիւնն Այդպէս չէ սակայն Թիւրքիայի թե-
մական յօրելանական յանձնաժողովը: Նա
մի տարօրինակ մարմին է. ստեղծվել է
կամ, աւելի ճիշդն ասած, վճիռ է տարօր-
նակ պայմաններում, ուստի և տարօրինակ
գործակերպ է ընդգրկել կէս յայտնի, կէս
խլուրդային գործակերպ: Նախ, յայտնի
չէ մինչև այժօր, թէ հաստատվել է նա կա-
թողիկոսական կօնդակով թէ՞ ոչ: Որքան մեզ
յայտնի է, այդպէս հաստատութիւն մինչև
այսօր չը կայ. (ընդունե՛ք մի բովէ, որ
նա պէտք չէ զգում կաթողիկոսական հաս-
տատութեան, ինչպէս մտածում է և
նրա նախագահ Մկերտիկ Կաթողիկոսը:
այդ դէպքում, ինչու է նա դիմել և
խնդրել կաթողիկոսական հաստատութիւն):
Երկրորդ՝ նա ընդգրկել է մի գործունէու-
թիւն, որի կէսը հրապարակային է, կէսը
խլուրդային: Եւ այդ հրապարակային-
խլուրդային գործակերպը պարզ մասնում
է տարօրինակ թեմական յանձնաժողովի
անդամների և նախագահի ներքին աշխար-
հայեացքը և բարոյական սկզբունքը՝ լի-
նել արտաքուստ բարեկալ, ներքուստ թըշ-
նամի Յանձնաժողովը պաշտօնապէս դպրոց-
ցական ֆօնդի հաւար է հանգանակութիւն
սկսել, բայց ոչ-պաշտօնապէս՝ իր անդամ-
ների և շօթիքովս թերթի միջոցով աշխա-
տու է նաև, և աւելի, գրական ֆօնդի հա-
մար: Եւ անա լինում են այսպիսի դիմում-
ներ:

— Դուք մտադիր էք մի որևէ նուէր տալ
յօգուտ դպրոցական ֆօնդի, չէ՞:

— Այո:

— Կաւ չի լինի, որ կէսը տաք յօգուտ
դպրոցական ֆօնդի, կէսը՝ յօգուտ գրական
ֆօնդի:

— Բայց չէ՞ որ կաթողիկոսի կօնդակը և
թոյլատրութիւնը միայն դպրոցական ֆօնդի
մասին է:

— Հոգ չէ, գրական ֆօնդն ևս հաւակ-
րելի է:

Եւ հետևանքը այն է լինում, որ մէկը ե-
թէ կա՛նքում է տալ 1000 կամ 3000 ռ.
յօգուտ դպրոցական ֆօնդի, սակայն կէսը,
պահելով միւս կէսը կամ խոտանալով գրա-
կան ֆօնդի հաւար:

Մենք ամենին չենք պարմանում յանձ-
նաժողովի անդամների ուշադրանք գործակա-
կերպի վրա: Նրանք այն անձինք են, որոնք
սկզբից ի վեր դէ՛ն էին դպրոցական ֆօն-
դին, իսկ յետոյ, տեսնելով որ անկարող են
խանդարել և արգելք լինել, բարեւոք համա-
րեցին կեղծել, համակերպել, որպէսզի կա-
րողանան գէթ խլուրդային եղանակով առաջ
տանել իրանց ծրարքը: Այդ մարդիկ այն-
քան կուրացած են կրքից և յախառութիւ-
նից, որ բնաւ չեն ուզում հաճուցիլ,
թէ ոչ որ գրական ֆօնդի գէ՛մ չէ, բայց
քանի որ թոյլատրութիւն ստացված է և այն-
տարբարված դպրոցական ֆօնդի մասին,
պէտք է միանաւու ոյժեկով աշխատել
այժմ դպրոցական ֆօնդի համար, իսկ յի-
ստոյ, երբ այդ ֆօնդը իրագործվի, սկսել
աշխատել միանաւու գրական ֆօնդի հա-
մար, որովհետև այժմ դպրոցական ֆօնդի
կողմին դնել և գրական ֆօնդը, որի համար
ոչ միջնորդութիւն է եղել և ոչ ևս թոյլ-
տուութիւն ստացվել, նշանակում է երկու
ֆօնդերն ևս ջլտուել, խափանել և զբանով
չնչին արգելիք ստանալու Այդ պարզ արա-
մաբանութիւնը անկարող են հասկանալ
յանձնաժողովի անդամները, որովհետև նը-
րանք սկզբից հակառակ են եղել դպրոցա-
կան ֆօնդին. բայց շատ տարօրինակ է, որ
այդ պարզ արամաբանութիւնը չէ կարո-
ղանում հասկանալ թեմակալ առաջնորդը,
որը պարտաւոր է ամեն կերպով ոյժ տալ
կաթողիկոսական կօնդակին և դպրոցական
ֆօնդին: Ե.

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆՑ

III

Եզրիպատի հայութիւնը տղուտ Նեղոսի
ափերից մի գեղեցիկ օրինակ է ստալիս այ-
սօր մեզ, հայկական կենտրոններում նը-
ստածներին, մի գեղեցիկ օրինակ համերաշ-
խութեան, երբ ամբողջ կուսակցութիւններ,
որոնց ծրարքը, սակարկան, ամբողջ գոր-